

# Մտացեք ծածկույթ.

## Ինչ պետք է իմանալ առողջության ապահովագրության շուկայի մասին

■ Եթե չունեք առողջության ապահովագրություն, Առողջության ապահովագրության շուկան (Health Insurance Marketplace®) կարող է օգնել ձեզ գտնել ձեր կարիքներին և բյուջեին համապատասխան ծածկույթ: Երբ լրացնում եք շուկայի համար դիմումը, մենք ձեզ կտեղեկացնենք, թե արդյոք համապատասխանում եք հետևյալ չափանիշներին:

- **Մասնավոր ապահովագրության ծրագրեր:** Դուք կարող եք իրավասություն ունենալ խնայողությունների՝ էլնելով ձեր ընտանիքի չափից և եկամտից: Եթե դուք խնայողությունների իրավունք չունեք, դուք դեռ կարող եք գնել շուկայի ծածկույթը: Ծրագրերն ընդգրկում են առողջության համար առաջնային նպաստներ, նախկինում գոյություն ունեցող պայմաններ և կանխարգելիչ խնամք: Դուք սովորաբար կարող եք գրանցվել միայն այս ծրագրերից մեկում՝ տարեկան բաց գրանցման ժամանակահատվածում, բացառությամբ այն դեպքերի, երբ դուք գրանցվում եք հատուկ գրանցման ժամանակաշրջանի՝ կյանքի իրադարձության պատճառով (օրինակ՝ այլ ծածկույթի կորուստ, ամուսնություն, տեղափոխում կամ երեխայի ծննդաբերություն):
- **Medicaid-ը կամ երեխաների առողջության ապահովագրության ծրագիր (CHIP):** Այս ծրագրերն ընդգրկում են սահմանափակ եկամուտ ունեցող, հաշմանդամություն ունեցող և այլ հանգամանքներ ունեցող մարդկանց: Եթե պարզվում է, որ իրավասու եք, մենք ձեր տեղեկությունները կուղարկենք ձեր պետական գործակալությանը և նրանք կկապվեն ձեզ հետ: Դուք կարող եք դիմել Medicaid-ի կամ CHIP-ի համար ցանկացած ժամանակ:

■ **Այցելեք [HealthCare.gov](https://www.healthcare.gov)**՝ ավելին իմանալու այն մասին, թե ինչպես կարելի է դիմում ներկայացնել շուկայի ծածկույթի համար: Որոշ նահանգներում գործում են իրենց սեփական շուկաները: Այլ նահանգներում շուկան դեկավարում է դաշնային կառավարությունը: Անկախ նրանից, թե որտեղ եք ապրում, ձեր հաջորդ քայլերի մասին կարող եք իմանալ [HealthCare.gov](https://www.healthcare.gov) կայքում:

■ **Եթե դուք իրավասու եք աշխատավայրում ապահովագրության, ապա կարող եք ցանկանալ անցնել շուկայի ծրագրի:** Բայց մինչև ժամանակ դուք չեք կարող գրանցվել աշխատանքի վրա հիմնված ծրագրի և շուկայի ծրագրում՝ խնայողություններով: Եթե դուք ներգրավված չեք աշխատանքի վրա հիմնված ծրագրում, բայց ձեր գործատուն ձեզ առաջարկում է այն, դուք չեք կարողանա խնայողությունների իրավունք ստանալ՝ էլնելով ձեր եկամտից, բացառությամբ այն դեպքերի, եթե աշխատանքի վրա հիմնված ծրագիրն անհասանելի է կամ չի համապատասխանում նվազագույն պահանջներին:

■ **Եթե կյանքի որոշակի իրադարձություններ եք ունենում (օրինակ՝ տեղափոխվում նոր նահանգ, ամուսնանում, երեխա ունենում կամ կորցնում եք առողջության ծածկույթը), կարող եք իրավունք ունենալ հատուկ գրանցման ժամանակաշրջանի՝ բաց գրանցումից դուրս գրանցվելու կամ ձեր շուկայի ծրագիրը փոխելու համար:** Դուք կարող եք դիմել Medicaid-ի կամ CHIP-ի համար ցանկացած ժամանակ: Շուկան կարող է խնդրել ձեզ փաստաթղթեր ներկայացնել՝ ձեր իրավասությունը հաստատելու համար: Նախքան սկսեք օգտագործել ձեր ծածկույթը, դուք պետք է ուղարկեք փաստաթղթերի պատճենները:

Դուք իրավունք ունեք ստանալու Շուկայի վերաբերյալ տեղեկությունները հասանելի ձևաչափով, ինչպիսին է մեծ տառաչափով տպված տեքստը, Բրայլի այբուբենով տեքստը կամ աուդիոն:

Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնել, եթե կարծում եք, որ Ձեր հանդեպ խտրական վերաբերմունք է ցուցաբերվել:

Այցելե՛ք [CMS.gov/about-cms/agency-information/aboutwebsite/cmsnondiscriminationnotice.html](https://www.cms.gov/about-cms/agency-information/aboutwebsite/cmsnondiscriminationnotice.html) կամ զանգահարեք Ապահովագրական շուկայի զանգերի կենտրոն 1-800-318-2596 հեռախոսահամարով՝ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար:

TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-855-889-4325 հեռախոսահամարով:

## Health Insurance Marketplace

CMS Product No. 11749-AR (Armenian)  
Revised July 2021

Այս ապրանքն արտադրվել է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին:  
Առողջության ապահովագրության շուկան® (Health Insurance Marketplace®) ԱՄՆ-ի գրանցված ծառայության նշան է:  
Առողջապահության և մարդկային ծառայությունների վարչություն:



HealthCare.gov